ՎԱՆԱՆԴԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՈՍՏԱՆԻ ՄԱՐԶ
(X դ. առաջին կես)

ՌԱՖԱՅԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հյուսիս-արևմտյան Հայաստանի Վանանդ գավառը, որը 961—1065 թթ. գտնվում էր Կարսի թագավորության կազմում, նախորդ դարերում, դեռ Արշակունյաց շրջանից, պատկանում էր վանանդեցիների տեղական նախարարությանը։ Այդ ֆեոդալական իշխանությունը գոյատևեց մինչև IX դ. վերջը։ Նրա վերջին ներկայացուցիչներն են Վարդ-Մլեհը և նրա որդի Սահակը, որոնք հիշատակվում են 887 թ. գրված հիշատակարանում[1]։

887 թ. հետո Վանանդի իշխանները աղբյուրներում հիշվում են (ոչ անվանապես) ընդամենը մեկ անգամ։ IX դ. վերջից գավառը արդեն պատկանում էր Բագրատունիներին, իսկ նրա կենտրոն Կարսը հայոց թագավոր Աշոտ I-ի եղբոր՝ սպարապետ Աբասի նստավայրն էր։ Հ. Դրասխանակերտցին հաղորդում է, որ Աբասը հաստատվել էր «ի կողմանս պետութեան Վանանդայ»[2]։ «Պետություն» ասելով պատմիչը նկատի ունի «իշխանապետությունը»՝ իշխանական տերությունը[3]։ Ուրեմն Վանանդի տերերը կորցրել էին տոհմական տիրույթները, որոնք անցել էին Բագրատունիներին։ Հ. Դրասխանակերտցին, ցավոք, չի ասում, թե ինչպիսի պարագաներում տեղի ունեցավ քաղաքական այդ փոփոխությունը գավառում, սակայն հանրահայտ է, որ իշխող դինաստիան հարքունիս էր բռնագրավում վասալ ֆեոդալների հողերը, վերջիններիս ըմբոստության դեպքում։ Ամենայն հավանականությամբ Աշոտ I-ի ժամանակ վանանդեցիները ըմբոստացել էին կենտրոնական իշխանության դեմ, և այդ պատճառով էլ սպարապետը գավառը խլել էր տերերից և միացրել Բագրատունիների ոստանին։ Այն փաստը, որ մի քանի տարի հետո Վանանդի նախկին իշխանները Հավնունիների հետ միացել էին Հասան Դնթունու՝ արքունիքի բարձրաստիճան պաշտոնյայի դավադրությանը Սմբատ I-ի դեմ[4], հաստատում է նման եզրակացությունը։ Պատմիչը երկրորդ անգամ Կարսը հիշատակում է 897 թ. դեպքերի կապակցությամբ։ Այդ թվականին Ատրպատականի ամիրա Ավշինը Տաշիրի վրայով մտել էր Հայաստան, հասել Վանանդ և պաշարել Կարսի ամրոցը, որտեղ փակվել էին «Հայոց տիկինը»՝ արքայի կինը, նրա հարսը (արքայազն Մուշեղի կինը) և ազատների կանայք։

---

[1] Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 84։

[2] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 144—145։ Սա Կարս—Վանանդի առաջին հիշատակությունն է Բագրատունյաց շրջանում։

[3] Հմմտ., օրինակ, Արծրունիների «իշխանապետության» հետ, որը Աշոտ Արծրունու մահից հետո ժառանգեց նրա որդին՝ Գրիգոր Դերենիկը (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 135)։

[4] Նույն տեղում, էջ 206։ Դրանից հետո վանանդեցիները աղբյուրներում այլևս չեն հիշատակվում։

Ամրոցի պահակազորի պետն էր Հասան Գնթունին, որին պատմիչն անվանում է «յոյժ հաւատարիմ և հրամանատար ի վերայ ամենայն տան արքայի»։ Այստեղ էին գտնվում նաև արքայի գանձերն ու կարասին, որը հայտնի էր Ավշինին[5]։ Իշխանուհիներին և ապաստանածներին փրկելու համար Հասանը համաձայնվել էր հանձնել բերդը, պայմանով, որ պաշարվածներն աղատ արձակվեն, բայց ամիրան դրժել էր իր խոստումը և թագուհուն իշխանուհիների հետ տարել Դվին։ Երբ Սմբատը եկավ Կարս, արդեն ուշ էր որևէ բան ձեռնարկելու համար։ Եվ քանի որ ձմեռ էր, ասում է Հ. Դրասխանակերտցին, ապա թագավորը չկարողացավ Կարսում «որոշել իր կայանը» և գնաց Կաղզվան գյուղը[6]։ Սրանից պարզվում է երկու հանգամանք, որոնք կարևոր են հարցի պարզաբանման համար։ Նախ Աբասից հետո Կարսը չէր անցել ո՛չ նրա ժառանգին, ո՛չ էլ նոր սպարապետին։ Սպարապետի պաշտոնում Աբասին հաջորդել էր Շապուհը՝ Աշոտ I-ի որդին, հետո Աշոտ Շապուհյանը՝ վերջինիս որդին։ Աշոտ II Երկաթը ինքն էր գլխավորում բանակը, իսկ այնուհետև սպարապետ էր Գոռ իշխանը։ Նրանցից ոչ մեկը Կարսում չի նստել։ Առաջին երկուսի դղյակն էր Բագարանը[7], երրորդինը անհայտ է, իսկ Կարսը Սմբատի կայանն էր, ինչը պարզ երևում է պատմիչի խոսքերից։ Դրանով ժխտվում է նախկինում հայտնված[8] և այժմ էլ կրկնվող այն կարծիքը, ըստ որի Կարսը եղել է սպարապետների նստավայրը։ Ամրոցը դեռ հարմարեցված չէր ձմեռվա ամիսների համար, բայց մնացած ժամանակ օգտագործվում էր որպես կայան։ Այնտեղ էին պահվում թագավորի գանձերն ու կարասին, իսկ պատերազմի ժամանակ այն օգտագործվում էր իբրև թագավորի ընտանիքի ապաստան։ Հետևաբար, գահակալական պայքարում, որը Աշոտ I-ի մահից հետո սկսվել էր սպարապետ Աբասի և Սմբատ I-ի միջև[9], վերջինս ոչ միայն պաշտպանել է իր իրավունքները, այլև հորեղբորից խլել է Վանանդը, իսկ Աբասի որդուն զրկել սպարապետի պաշտոնից[10]։

Սմբատից հետո իշխեց Աշոտ II-ը, որը Վանանդի կառավարիչ նշանակեց իր եղբորը՝ Աբասին, նրան հանձնելով իշխանաց իշխանի պաշտոնը[11]։ Կարսը դարձավ Աբասի նստավայրը, իսկ նրա թագավորության տարիներին՝ մայրաքաղաք։

Աբասի հաջորդ Աշոտ Ողորմածը 961 թ. մայրաքաղաքը տեղափոխեց Անի, իսկ Կարսում կառավարիչ մնաց նրա եղբայր Մուշեղը, որը Վանանդի առաջին թագավորը դարձավ։ Այդպիսին են երկրամասում տեղի ունեցած անցքերը IX դ. վերջից, Բագրատունիների տիրույթ դառնալուց հետո, մինչև Կարսի թագավորության առաջ գալը։ Այդ տարիներին Կարսում իշխողների ժամանակագրությունը հետևյալ պատկերն ունի.

Աշոտ I-ի ժամանակ (IX դ. վերջ)—սպարապետ Աբասի նստավայր։

---

5 Նույն տեղում, էջ 178—179։ Նույն էջում պատմիչը Հասանի պաշտոնը անվանում է «հրամանատար տան արքունի»։

6 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 178—180։

7 Նույն տեղում, էջ 194։

8 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, կ. Պոլիս, 1912, էջ 1075։

9 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 145—146։

10 Արաս սպարապետն ուներ Աբաս անունով որդի (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 146)։

11 Նույն տեղում, էջ 304։

Սմբատ I-ի ժամանակ (890—914)—«արքունի կայան»՝ Հասան Գնթունու կառավարչության ներքո։

Աշոտ II-ի ժամանակ (914—928)—իշխանաց իշխան Աբասի նստավայր։

Աբասի թագավորության տարիներին (928—953)—հայոց մայրաքաղաք (Արաս թագավորի նստավայր)։

Աշոտ III-ի գահակալության առաջին շրջան (953—961 թթ.)—հայոց մայրաքաղաք (Աշոտի նստավայր)։

961 թ. Մուշեղի նստավայր, Կարսի թագավորության կենտրոն։

Աբաս թագավորի մահից հետո նրա անձնական տիրույթները՝ Այրարատ գավառը, Վանանդը և Երասխաձորը[12] ժառանգեցին երկու որդիները՝ Աշոտն ու Մուշեղը։ Եղբայրներից ավագն ստացավ Վանանդը և իր գահակալության առաջին ութ տարիներին (953—961) աթոռակալում էր Կարսում։ Նրան բաժին հասան նաև Շիրակն ու Այրարատը։ 961 թ. Աշոտը մայրաքաղաքը տեղափոխեց Անի։ Մեր հոդվածներից մեկում բացատրել ենք տեղափոխման պատճառները՝ 949 թ. Բյուզանդիան զավթել էր մի քանի գավառներ Հայաստանի արևմուտքում (Հավնունիք, Բասեն և Կարին) և Հայոց թագավորությանը սահմանամերձ այդ տարածքներում ստեղծել Կարինի բանակաթեմը։ Վերջինիս հարևանությունը Կարսին՝ Աշոտ Ողորմածին ստիպեց ավելի հարմար տեղ ընտրել մայրաքաղաքի համար[13], իսկ Վանանդը տրվեց թագավորի կրտսեր եղբայր Մուշեղին։ Ժամանակակից պատմիչներից այդ իրադարձությունը արձանագրել է Ասողիկը. «Եւ զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ եւ շահնշահ կոչիւր, ամս ԻԵ։ Եւ Մուշեղ եղբայր նորա առ նովաւ թագաւորեաց ի Կարս»[14]։ Նույնը գրում է XII դ. ժամանակագրության Անանուն հեղինակը. «...և զկնի սորա (Աբասի—Ռ. Մ.) Աշոտ որդի իւր, ամս ԻԵ և զեղբայր իւր՝ զՄուշեղ Կարուց կացոյց թագաւոր»[15]։ Այս հաղորդումներից երևում է, որ տեղափոխվելով Անի, Աշոտը Վանանդում կառավարիչ էր նշանակել եղբորը, նրան ճանաչելով «Կարուց թագավոր»։ Այլ կերպ իրենց հոր՝ Աբասի ժառանգության որոշ մասը, որը մինչ այդ պատկանում էր Աշոտ Ողորմածին, տրվեց Մուշեղին։ Մեր համոզմամբ այս արվում էր որպես հակամիջոց՝ բյուզանդական սպառնալիքի։ Բանակաթեմին հակադրվում էին Մուշեղին ենթակա մար-

---

12 «Այրարատեան գաւառ և մինչև ցԱրագածն կոչեցեալ ոտն, որ է բաժին կալուածոց Աբասայ որդւոյ Սմբատայ» գրում է Թովմա Արծրունին Արաս թագավորի տիրույթների մասին («Թ ո վ մ ա յ ի վարդապետի Ա ր ծ ր ո ւ ն ւ ո յ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 488)։ Կամրջաձորի ս. Նշանի «Պատմութիւն»-ից հայտնի է, որ Աբասի սեփականությունն էր նաև Երասխաձորը. «ի սահմանս Արշարունեաց նահանգին, որ էր ընդ տէրութեամբ Աբասայ թագաւորի՝ որդւոյ Սմբատայ Տիեզերակալի» (Գ ա ր ե գ ի ն Ա կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 172)։ Արշարունյաց ձորում Աբասի հովանավորությամբ կառուցվեց Կամրջաձորի վանքը։ Նրան նվիրվեցին դաստակերտներ ու ավաններ (նույն տեղում, էջ 172—174)։ Արշարունյաց ձորը նույն Երասխաձորն է։ Վանքը կառուցվել է հին Արեղյանք գավառում։ Հոռոմոսի վանքի արձանագրություններից մեկում գրված է. «Կարմնչին ձորին, որ Արեւլեանց կոչի» (Ղ. Ա լ ի շ ա ն, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 24)։ Աբասին պատկանում էր նաև Վանանդը, իսկ Կարսը նրա նստավայրն էր և պետության մայրաքաղաքը։

13 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 5, էջ 89—94։

14 «Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր օ ն ե ց ւ ո յ Ա ս ո ղ կ ա ն Պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 180։

15 «Մանր ժամանակագրություններ», հ. II, հրատարակեց Վ. Հ ա կ ո բ յ ա ն, Երևան, 1956, էջ 501։

ղերը (Կարսի թագավորությունը)։ Այդ մարզերը վարչականորեն մի միավոր էին կազմում, իսկ նրանց կառավարիչ Մուշեղին շահնշահը «կացուցանել» էր[16], այլ խոսքով՝ նշանակել էր թագավոր։ Մեր կարծիքով, դրանով տեղի էր ունեցել հայրական ժառանգության բաժանում եղբայրների միջև՝ Վանանդ-Երասխաձորը տրվեց Մուշեղին, իսկ Շիրակ-Այրարատը մնաց Աշոտին։ Ժառանգության բաժանումը հաստատվել է պաշտոնական-իրավական ակտով՝ Մուշեղին թագ շնորհելու միջոցով, քանի որ թագադրությունը ֆեոդալական միջավայրում ոչ միայն հանդիսավոր արարողություն էր, այլև իրավական ակտ։ Այդ ակտով թագ ստացողը մեծարվել է «թագավոր» տիտղոսով։ Այդպիսով, Կարսի թագավորության կազմավորումով տեղի էր ունեցել Մուշեղի բաժնեմասի վարչա-իրավական ձևակերպումը՝ Աշոտ Ողորմածի հատկացրած սահմաններում։

Այսպիսով, 961 թ. Վանանդը (մերձակա մի քանի գավառների հետ) դադարեց հայոց թագավորի անձնական տիրույթ լինելուց և հիմք դրվեց տեղական Բագրատունյաց կրտսեր ճյուղի իշխանությանը, որը վերջնականապես ձևավորվեց Մուշեղի հաջորդ Աբաս I Կարսեցու (984—990)[17] օրոք՝ կազմակերպվեց հատուկ զորագունդ, հիմնվեցին դինաստիայի հոգևոր հաստատությունները (Շիրիմք, Թրին-Կուսանոց), հատուկ ուշադրություն դարձվեց կյանքը նորմալ հունի մեջ դնելուն[18]։

Մուշեղի հիմնած շառավիղը (Մուշեղյաններ) որոշ նմանություն ունի Բագրատունյաց մյուս կրտսեր տոհմաճյուղի՝ Կյուրիկյանների հետ։ Երկու դեպքում էլ ֆեոդալական տներն առաջացան տեղական թագավորության կազմավորման հետ միաժամանակ։ Բայց կար նաև տարբերություն՝ Մուշեղյանների իշխանությունը ժառանգական էր, չնայած Կարսի թագավորների քաղաքական ստատուսը դեռ լրիվ պարզ չէ և կարիք ունի ուսումնասիրման[19]։ Կյուրիկյանների թագավորական իշխանությունը ժառանգական չէր (համենայն դեպս մինչև 1045 թ.՝ Անիի անկումը), այն արքունիքի տված արտոնություն էր երկրամասում (Տաշիր-Ձորոփորում) իշխելու պայմանական-ժառանգական իրավունքով[20]։

Միաժամանակ Բագրատունյաց կրտսեր տոհմաճյուղերի իշխանությունը տարբերվում էր մյուս երկու տեղական թագավորությունների գահակալների իրավունքներից։ Վասպուրականում և Սյունիքում հայրենատեր գահերեցները սեփական տիրույթներում աստիճանաբար կենտրոնացնում էին հանրային իշխանությունը։ Դա տնտեսական ու ռազմական մեծ կարողությունների տեր դառնալու արդյունք էր, որը հանգեցնում էր սեփական տիրույթներում քաղաքական ինքնուրույնությանը։

Այդպես առաջացան թագավորությունները Վասպուրականում և Սյունիքում, բայց այդպես չէր Վանանդում և «Տաշիր երկրում» (Լոռվա թագավորությունում)։ Այստեղ տեղական հայրենատեր-հողատերեր մինչև թագավորու-

---

16 «Կացուցանել» նշանակում է «հաստատել», «կարգել» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1078)։

17 Աբասը իշխել է 6 տարի, մինչև 990 թ. (Ասողիկ, էջ 196)։

18 Նույն տեղում, էջ 197—198, 252։

19 Այդ տեսակետից բնորոշ է Մուշեղի և Սմբատ II Տիեզերակալի վեճը Շատիկ բերդի համար (Ասողիկ, էջ 188)։

20 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 3, էջ 90—94, 1977, № 1, էջ 76—79։

թյունների կազմավորումը գոյություն չունեին։ Բագրատունյաց արքունիքը ինքը իշխող դինաստիայի կրտսեր անդամներին բաժին հատկացրեց թագավորական ոստանի մարզերում, որոնցից մեկը (Վանանդը) շահնշահի անձնական տիրույթն էր, իսկ մյուսը՝ արքունի (ընդհանուր-տոհմական, պետական), վերակացուների կառավարչության ներքո էր։

Իշխող դինաստիայի կրտսեր անդամներին Հ. Դրասխանակերտցին անվանում է «արքունի տան գահերեցներ»[21]։ Թագավորական ոստանի հաղմական կարևոր նշանակություն ունեցող մարզերը ենթարկելով «արքունի տան գահերեցների» իշխանությանը, արքունիքը ձգտում էր նախ պետության ծայրամասերը կապել պետության վարչա-քաղաքական կենտրոնի հետ, և միաժամանակ ապահովել նրանց կառավարիչների կախումը հայոց շահնշահերից։ Այդ տեսակետից միանգամայն ճշմարիտ է Ա. Հովհաննիսյանի այն դիտողությունը, որ «Բագրատունիները երկրի ամբողջությունը պահպանելու մտայնությամբ վասալական տիրույթներ և թագավորական տիտղոսներ էին բաշխում իրենց հարազատներին։ Այդպես էին առաջացել Կարսի ու Լոռվա թագավորությունները Սմբատ Բ-ի (պետք է լինի Աշոտ Գ-ի—Ռ. Մ.) ժամանակ»[22]։ Իրոք այդպես էր՝ թագավորական տիտղոսներ կամ թագավորական իշխանություն, այլ կերպ ասած պետական կարևոր պաշտոններ տալով ազգակիցներին, Աշոտ III-ը ձգտում էր իրեն և արքունիքին ենթարկել իր ընտանիքի կրտսեր անդամներին։ Դա մի միջոց էր, որը կախման մեջ էր դնում այդ թագավորներին։ Այլ բան է, որ, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում առաջ էին դալիս բարդություններ, վեճեր և երբեմն արքունիքը ստիպված էր լինում բռնի միջոցներով հնազանդեցնել նրանց, ինչպես եղավ Գագիկ I-ի ժամանակ։ Մագած խռովությունների պատճառով Գագիկ շահնշահը Դավիթ Կյուրիկյանից խլեց նրա տիրույթների կեսը (Աղստևի հովիտը), իսկ Վանանդում Մուշեղի շառավիղին զրկեց իշխանությունից և Կարսի թագավոր նշանակեց իր որդի Աբասին (Աբաս II Կարսեցի)[23]։ Բայց Աշոտ III-ը վարչական իշխանությունը հանձնելով մերձավորներին, ձգտում էր ամրացնել պետության այն երկրամասերը, որոնք առավել կարևոր էին արտաքին վտանգից պաշտպանելու տեսակետից (Կարսի թագավորությունը սահմանակից էր բյուզանդական Կարին բանակաթեմին, իսկ Կյուրիկյանը՝ արաբա-քրդական ամիրայություններին)։

Ինչպես տեսանք, Վանանդը X դ. առաջին կեսին հիմնականում հայոց թագավորի անձնական տիրույթն էր։ 961 թ. այնտեղ առաջացավ թագավորություն, որի պատմությունը հատուկ հետազոտության նյութ է։ Սակայն ցանկանում ենք ճշտում կատարել Կարսի գահակալների անվանացանկում։ Այժմ գիտական գրականության մեջ նշվում են երեք գահակալներ՝ Մուշեղ (961—984), Աբաս (984—1029) և Գագիկ (1029—1065)։ Այդ ցանկը թերի է, իսկ իշխանության տարիները՝ սխալ։ Ինչպես ցույց ենք տվել մեր նախորդ հոդ-

---

21 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 143։

22 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 134, նույնը տե՛ս Վ. Բարխուդարյան, Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում IX—XI դդ. (թեկնածուական դիսերտացիա, անտիպ), Երևան, 1954, էջ 63։

23 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 12, էջ 56—57։

վածում, Կարսի (Վանանդի) թագավորությունը ունեցել է ևս 2 կառավարիչ[24]։ Այսպիսով, Կարսի Բագրատունյաց առհմաճյուղն ունի 5 ներկայացուցիչ՝

Մուշեղ (961—984)
Արաս I Կարսեցի (984—990)
Գագիկ I Կարսեցի (990—")
Արաս II Կարսեցի, Գագիկ I շահնշահի որդի (1020—1049)
Գագիկ II Կարսեցի (1049—1065)։

ВАНАНД — ОБЛАСТЬ БАГРАТИДСКОГО ЦАРСКОГО ДОМЕНА
(первая половина X в.)

РАФАЕЛ МАТЕВОСЯН

Резюме

В конце IX в. Багратиды отобрали область Вананд у местных феодалов Ванандеци. В течение почти всей первой половины X в. Вананд с городом Карсом являлись собственностью царей Армении. В 961 г. Ашот III Милостивый (953—977) перенес столицу из Карса в Ани, а Вананд с прилегающими гаварами передал в правление своему брату Мушегу, признав его Ванандским (Карским) царем. На наш взгляд, Карское царство было образовано Багратидским двором для защиты северо-западных границ государства от посягательств Византии, создавшей по соседству с Багратидским царством фему Карин.

24 Նույն տեղում, էջ 57։